ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № N ԼՄԼԲՀ-ՄԱԾՁԲ-23/06

ք. Երևան

« 25» օգոստոսի 2023թ.

«ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Արայիկ Ներսիսյանի, որը գործում է Տեղական ինքնակառավարման մասին օրենքի հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Առավոտ» օրաթերթ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գարիկ Մելքոնյանի, որը գործում է ընկերության կանոնադրությանհիմանվրա (այսուհետ՝Կատարող), մյուսկողմից, կնքեցինսույնպայմանագիրըհետևյալիմասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է հայտարարությունների տպագրության և հրապարակման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Սույն Պայմանագրի գործողությունը տարածվում է կողմերի միջև « 25» օգոստոսի 2023թ.-ից առաջացած հարաբերությունների վրա:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշվածՏեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցինչհամապատասխանող ծառայություն՝ չընդունել ծառայությունը՝ սահմանելովանպատշաճորակի ծառայությունը պայմանագրինհամապատասխանող ծառայությամբանհատույցփոխարինմանողջամիտժամկետ.

2.1.3 Միակողմանիլուծելպայմանագիրը, եթե Կատարողնէականորենխախտելէպայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրըխախտելնէականէհամարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին թերությունները շտկելու համար:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.2 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.2 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

3.3 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված:

gitally signed by
ELKONYAN
ARIK
11780554
ate: 2023.08.28

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության 1սմ² գինը կազմում է 150/Մեկ հարյուր հիսուն/ՀՀ դրամներառյալ ԱԱՀ-ն, ընդ որում յուրաքանչյուր աշխատանքից հետո ընդհունման և հանձնման ակտի հիման վրա հաշվարկվում է յուրաքանչյուր հայտարարության զումարը համաձայն սահմանված միավորի զումարի: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ հանձման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո 7 բանկային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված զումարի 0,05 % չափով:

5.3 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.4 Տույժերի վճարումը Պատվիրատուին չի ազատում իր պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

6.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է սույն պայմանագրի № 1 հավելվածով սահմանված ժամկետով:

6.2 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

6.3 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

6.4 Սույն պայմանագիրը կազմված է էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

6.5 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԱՏԱՐՈՂ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ԱՌԱՎՈՏ» օրաթերթ ՍՊԸ	Լոռի Բերդի համայնքապետարան
ք.Երևան, Արշակունյաց 4, 15-րդ հարկ	ՀՀ Լոռու մարզ, գ.Լոռի Բերդ. Աշոտ Երկաթի
Արարատբանկ	1-ին նրբ. շ.2
Հ/Հ 1510032454880300	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02509022	Հ/Հ 900252144028
	ՀՎՀՀ 06954163
Տնօրեն———————— Գ. Մելքոնյան	Համայնքի ղեկավար---NERSISYAN ARAYIK 1201680395---... ...Digitally signed by NERSISYAN ARAYIK

Հավելված N 1
« 25» օգոստոսի 2023թ.
№ ԼՄԼԲՀ-ՄԱԾՁԲ-23/06 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

	Ծառայության անվանումը	Տեխնիկական բնութագիրը	չ/մ	Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	Միավորի գինը	Ծառայության մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	Հայտարարությունների տպագրման և հրապարակման ծառայություններ	Տեղական ինքնակառավարման մարմինների հայտարարություններ՝ աճուր-վաճառք, վարձակալություն, մրցույթ. արտերկրյա և միջազգային կազմակերպությունների, բարեգործական առաքելությունների, ներկայացուցչությունների, ընկերությունների հայտարարություններ ու տեղեկացումներ	սմ ^{2}	1սմ^2 գինը կազմում է 150 /Մեկ հարյուր հիսուն/ ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն	150	ք. Երևան, Արշակունյաց 4, 15-րդ հարկ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.12.2023թ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԱՌԱՎՈՏ» օրաթերթ ՍՊԸ
ք.Երևան, Արշակունյաց 4, 15-րդ հարկ
Արարատբանկ
Հ/Հ 1510032454880300
ՀՎՀՀ 02509022

Տնօրեն——————————— Գ. Մելքոնյան

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Լոռի Բերդի համայնքապետարան
ՀՀ Լոռու մարզ, գ.Լոռի Բերդ. Աշոտ Երկաթի 1-ին նրբ. շ.2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900252144028
ՀՎՀՀ 06954163

Համայնքի ղեկավար----NERSISYAN ARAYIK 1201680395- Digitally signed by NERSISYAN ARAYIK

gitally signed by
LKONYAN
RIK
11780554
te: 2023.08.28